

**ԳԱՆՁԱՍԱՐԻ 1714 Թ. «ԳԱՂՏՆԻ ԺՈՂՈՎԻ»
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Բանալի բառեր՝ Ապրես Բեկնազարյանց, Մակար Բարխուտարյանց, Բաֆֆի, «Գաղտնիք Ղարաբաղի», Արցախի մելիքություններ, Գանձասար, «գաղտնի ժողով», արձանագրություններ, գրական կեղծիք, անվավեր փաստաթուղթ:

1886 թ. Ս. Պետերբուրգում Ապրես Բեկնազարյանցի անունով լույս է տեսնում «Գաղտնիք Ղարաբաղի» խորհրդավոր վերտառությունմբ մի աշխատություն¹, որի հեղինակն իրականում Մակար եպս. Բարխուտարյանցն էր: Շատ շուտով այդ գրքում տեղ գտած կոպիտ փաստական սխալների և հորինվածքների խիստ քննադատությունմբ հանդես եկան Բաֆֆին² ու Լեոն³, որոնք համոզիչ կերպով ապացուցեցին, որ «Գաղտնիք» կոչվածը ոչ այլ ինչ է, եթե ոչ գրական կեղծիք: Այդ առիթով Բաֆֆին գրում էր. «Գաղտնիք»-ը ոչ միայն գրականական որևէ արժեք չունի, այլ մինչև անգամ վնասակար է: Անհմուտ ընթերցողին նա կարող է մոլորեցնել, և սուտը, կեղծը, անհավատալի ճշմարտի տեղ մատակարարել: Այդ գրքի հորինվածքի մեջ այնքան չի պիտի զարմանալ հեղինակի տգիտության վրա, որքան նրա անպատկառ հանդգնության վրա, որով նա վստահություն է ունեցել կարծելու, թե յուր աններելի վարմունքը գաղտնի կմնա «Գաղտնիք»-ի մեջ»⁴:

Արդեն ուղիղ 130 տարի է անցել «Գաղտնիք Ղարաբաղի» աշխատության հրատարակումից, սակայն այդ երկում տեղ գտած մի շարք գրական

¹ Ա. Բեկնազարեանց Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886:

² Բաֆֆի, Գաղտնիք Ղարաբաղի, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 12, Երևան, 1999, էջ 17-133:

³ Լեո, Վէ՞պ, թէ պատմություն (Ղարաբաղի անցեալը Ապրես Բեկնազարեանցի գրչի տակ), Շուշի, 1887:

⁴ Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 133:

հնարքներ այսօր էլ շարունակում են գայթակղության քար հանդիսանալ որոշ հետազոտողների համար: Ասվածն առաջին հերթին վերաբերում է միայն «Գաղտնիք»-ի միջոցով մեզ հասած Գանձասարի 1714 թ. «գաղտնի ժողովի» արձանագրություններին, որոնց վավերականության քննությանն էլ նվիրված է սույն հետազոտությունը:

Նախքան մեր բուն քննությանն անցնելը, հարկ ենք համարում այդ արձանագրությունները բերել ամբողջությամբ.

«Ժողովն Աղուանից (Գանձասարի – Ա. Մ.) Եսայի կաթողիկոսի նախագահութեամբ որոշում և ստորագրում է հետևեալ կանոնները:

Ա. Աղուանից կաթողիկոսն կընտրուի ժողովրդեան ազատ իրաւունքով և կը հաստատուի Ս. Էջմիածնի կաթողիկոսի կոնդակով:

Բ. Աղուանից կաթողիկոսն, ըստ դարաւոր սովորութեան, պէտք է հպատակի Էջմիածնի կամքին, հայութեան միութեան կապը պահպանելու համար:

Գ. Եթէ Զալալեան տոհմի եպիսկոպոսներից և ազգից չգտնուի արժանաւորագոյն կաթողիկոսացու, դրսից ընտրելու է:

Դ. Որդիաբար հնազանդիլ Աղուանից կաթողիկոսին և սիրով ընդունիլ նորա հոգևոր կարգադրութիւնները:

Ե. Իւրաքանչիւր մելիքի գաւառի վիճակաւոր եպիսկոպոսն կամ վարդապետն կընտրուի տեղական ժողովրդից և մելիքից, և սոցա վկայաթղթով և հանրագրութեամբ կներկայացուի Աղուանից կաթողիկոսին:

Զ. Ամեն վիճակաւոր եպիսկոպոս իրաւունք ունի ձեռնամուխ լինիլ միայն իւր վիճակի կարգադրութեան և ո՛չ այլոց թէ՛ ձեռնադրութեամբ և թէ՛ որևիցէ գործերով:

Է. Եթէ ամեն գաւառում հարկաւորուին վարդապետ, քահանայ, սարկաւազ և դպիր՝ վիճակաւոր եպիսկոպոսներն նախ պարտաւոր են գրով կանխաւ զեկուցանել Աղուանից կաթողիկոսին և ապա ձեռնադրել նորա հրամանաւ:

Ը. Ամեն եպիսկոպոս պէտք է հոգալ իւր վիճակի և իւր վանքի լուսաւորութեան և որչափ կարելի է ձեռնադրել ուսեալները և ո՛չ թէ տգէտները:

Թ. Վանահայրերի ընտրութիւնն կախուած է միաբանութիւններից և Աղուանից կաթողիկոսին հաստատութիւնից:

Ժ. Յանցաւոր եպիսկոպոսների պատիժներն կախուած են կաթողիկոսից. իսկ միաբան վարդապետաց, սարկաւազաց և դպրացն՝ վանահայր եպիսկոպոսներից, և քահանաներինն՝ վիճակաւոր եպիսկոպոսից, բայց այս ամենն զգուշաւոր քննութիւններից վերջն:

ԺԱ. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է գահերէջ ճանաչել Ջալալեան մելիքները և թէ՛ յայտնի և թէ՛ գաղտնի ժողովատեղի ընդունիլ Գանձասարի վանքը: Ամեն զօրավար հնազանդելու է իւր մելիքի հրամանին, ամեն գնդապետ իւր զօրավարին և ամեն զօրական իւր գնդապետին ևն:

ԺԲ. Իւրաքանչիւր մելիք պարտաւորուած կը լինի պահել Վ. (3000) կանոնաւոր զօրք, փորձառու զօրավար, հաւատարիմ սուրհանդակներ և պատրաստութիւններ:

ԺԳ. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է արթուն հսկել իւր սահմաններին, և եթէ վտանգ կը նշմարէ թշնամեաց կողմից, անմիջապէս պէտք է հաղորդէ միւսներին:

ԺԴ. Իւրաքանչիւր մելիք, եթէ կը յանդգնի իւր գաւառի որոշեալ սահմաններից դուրս գալ և ուրիշ մելիքների իրաւունքը բռնի յափշտակել՝ կը պատժուի միւսների (մելիքների) ժողովով որոշած պատժով և ԺԹ. (10000) թուման տուգանք կը տուժէ մելիքաց (ընդհանուր) գանձարանին և կտուժէ առանձին՝ վնասուած մելիքի վնասը:

ԺԵ. Ամեն ոք (մելիք) պարտաւոր է ամրապնդած պահպանել ներքին սիրոյ և միաբանութեան կապը, միաձոյլ զօրութեամբ արտաքնոց դէմ կռուելու:

ԺԶ. Մեծ կամ փոքր պատերազմներն կը մղուին բոլոր մելիքների, զօրավարների և գնդապետների որոշելուց յետոյ: Անակնկալ կամ յանկարծակի դէպքերն բացառութիւն կը լինին:

ԺԷ. Հայրենեաց և կրօնի դէմ դաւաճանութիւն և ծանր յանցանք գործողն, թէ՛ մելիք լինի, թէ՛ զինուորական և թէ՛ ժողովրդական, կը պատժուի կրօնական և մելիքական խառն ժողովոյ որոշած պատժով:

ԺԸ. Ո՛չ այլազգի իշխանաւորաց հետ խնամութիւն հաստատել և ո՛չ երկպառակութեամբ նոցա յարիլ:

ԺԹ. Եթէ օժանդակութեան համար զօրեղ տէրութեան դիմելու հարկն զգալի լինի՝ կրօնական և աշխարհական խառն ժողովով որոշելու է առաջարկելի պայմանները և պահանջները:

Ի. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է Հայրենեաց ընդհանուր շահերը իւր գաւառի շահերից վեր դասել և իւր գաւառի շահերը իւր անձնական շահերից և օգուտներից:

ԻԱ. Մելիքներից ով ոք կը յանդգնի, իւր օրինաւոր ամուսնոյն վերայ,

ուրիշ ապօրինի կին պահել, հասարակութեան տալ վատ օրինակ և գայթակղութիւն և թշնամանել եկեղեցւոյ օրէնքը՝ այնպիսին անխնայ կը պատժուի արդար վրէժխնդրութեամբ:

ԻՔ. Ամեն մելիք պարտաւոր է գտնուիլ իւր զօրաց գլխին պատերազմի ժամանակ և խրախուսել քաջասրտութեամբ իւր զօրքը և զօրավարը: Բացառութիւն է հիւանդութեան բնաւոր պատճառն:

ԻԳ. Մեզանից ով ոք կը յանդգնի սոյն կանոններին հակառակը գործել, Հայրենեաց և կրօնի թշնամու կողմն անցնիլ, նորա հետ միաբանելով Հայրենեաց հանգստութիւնը վրդովել, հայը հայի դէմ թշնամի յարուցանել և արինհեղութիւն պատճառել՝ այնպիսին մահուան պատժով կը պատժուի, միւս մելիքներն կը գրաւեն նորա բերդը և ինչքը ցնոր տնօրէնութիւն:

Ամենքն ստորագրում են բնագիրը և արտագրուած հինգ օրինակները, յորոց մի մի օրինակ առնում, տաճարի ս. բեմը համբուրում և հեռանում են»⁵:

Եթէ հավատալու լինենք «Գաղտնիք Ղարաբաղի» աշխատութեանը, Գանձասարի 1714 թ. ժողովին մասնակցում էին «Խաչենի Մելիք-Գրիգոր Ջալալեան, Կիւստանի Մելիք-Յովսէփ Մելիք-Աբովեանց, Վարանդի Մելիք-Յիւսէփ Ա. Ջրաբերդի Մելիք-Եսայի Մելիք-Հայկազեանց և Դիզակի Մելիք-Աւան Բ»⁶:

Նախ և առաջ պարզենք, թե իրոք 1714 թ. մասնակիցների նման կազմով ժողով կարո՞ղ էր գումարվել: Քննութիւնը սկսենք Վարանդայի Մելիք-Հուսէփին Մելիք-Շահնազարյանից, որի իշխանութեան գալու տարեթիվն այժմ ստույգ հայտնի է: Մատենադարանում պահվում է Սեֆյան շահ Թահմասպ II-ի (1722–1732) հրամանագիրը, որով Վարանդայի մելիքի պաշտօնում նշանակում է Հուսէփին Մելիք-Շահնազարյանին: Անհրաժեշտ ենք համարում բերել այդ հրովարտակի XIX դարում կազմված և մեզ հասած պատճենի թարգմանութիւնը.

«Խոզի տարվա չորրորդ ամսի սկզբից Վարանդա մահալի մելիքութիւնը շնորհեցինք բարձրաստիճան Մելիք Մոհամմադ Հուսէփինին, որպէսզի ինչպես հարկն է այդ գործը ստանձնելով, նրա պարտականութիւնները առանց թերացման կատարի, ռայաթների հետ, որոնք ամենազոր Արարչի որոնումների արժեքավոր ձեռքբերումն են, լավ վերաբերվի՝ այնպես անելով, որպէսզի բոլորը նրա բարի արարքներից գոհ ու շնորհակալ լինեն և բարի օրհնանք հղեն սրբազնագոյն էութեանը: Վերոհիշյալ մահալի քաղախուդաներն ու

⁵ Ա. Բէկնազարեանց, նշվ. աշխ., էջ 211-214:

⁶ Նույն տեղում, էջ 210-211:

ուսուցիչները հիշյալ բարձրաստիճան պաշտոնյային պետք է այնտեղի մեկիք ճանաչեն, նրա օրինավոր խոսքին ու կամքին, որ ուղղված կլինի մահալի շենացմանը և դիվանի ունեցվածքի հարստացմանը, չհակառակվեն»⁷:

Հրովարտակը գրվել է հիջրայի 1142 թ. զի հեջջե ամսին⁸, ինչը համապատասխանում է Փրկչական 1730 թ. հունիսի 17-ից մինչև հուլիսի 17-ը ընկած ժամանակահատվածին: Ասվածից ինքնըստինքյան պարզ է դառնում, որ 1730 թ. Վարանդայում իշխանություն եկած Մելիք-Հուսեին Մելիք-Շահնազարյանը չէր կարող իր ստորագրությունը դնել 1714 թ. կազմված արձանագրությունների տակ:

Առավել անհավանական է այդ ժողովին «Կիլիստանի Մելիք-Յովսէփ Մելիք-Աբովեանցի» մասնակցության հարցը: Այստեղ խոսքն, անտարակո՛ւյս, Գյուլիստանի Մելիք-Աբովի որդի Մելիք-Հովսեփ Մելիք-Բեգլարյանի մասին է: Նրա հայրը՝ Մելիք-Աբով Բ-ը, հայտնի էր նաև Կաղ Աբով մականունով, քանի որ մի ոտքը վնասվել էր հրացանի գնդակից:

Աբովի կնիքը դրված է Արցախի մելիքների կողմից 1725 թ. ռուսական արքունիքին հղված երկու խնդրագրերի տակ, իսկ կնիքի վրա հատակորեն ընթերցվում է «Ք[րիստոս]ի ծ[ա]ռ[այ] Ապով» գրությունը⁹: Մեզ է հասել նաև ռուսաց հրամանատարության մոտ ուղարկված սղնախների ներկայացուցիչ Քրիստափորի՝ 1726 թ. նոյեմբերի 25-ին Արցախի մելիքներին, յուզբաշիններին և ողջ բնակչությանն ուղղված նամակը, որի մեջ ևս հիշատակվում է Աբովի անունը¹⁰: Կաղ Աբովը վախճանվել է 1728 թ.¹¹:

Նրան հաջորդել է եղբայրը՝ Մելիք-Թամրազը, քանի որ Մելիք-Աբովի միակ որդին՝ Հովսեփը, դեռևս անչափահաս էր: Մելիք-Թամրազը ցանկանում էր իր պատանի եղբորորդուն զրկել և՛ հայրական ժառանգությունից, և՛ իշխանությունից, որը մելիքների սովորության համաձայն, պետք է անցներ Հովսեփին, երբ վերջինս չափահաս դառնար: Ի վերջո, հորեղբոր ու եղբորորդու

⁷ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Կաթողիկոսական դիվան, քրթ. 2բ, վավ. 173: Վավերագրի հակառակ կողմում ռուսերենով մակագրված է. «копия от грамоты Тахмасп Шаха»: Հրատ. տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պր. III, կազմեց Ք. Կոստիկյանը, Երևան, 2005, էջ 184:

⁸ Նույն տեղում:

⁹ Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, Ереван, 1967, с. 235, 251.

¹⁰ Там же, с. 287.

¹¹ Բաճճի, Խամսայի մելիքությունները, Երևանի ժողովածու 12 հատորով, հ. 9, Երևան, 1987, էջ 423:

հակասությունը սրվում է, և Հովսեփի ջոկատը, գրավելով Թամրազի ամրոցը, նրան կախում է մի շինարի ծառից: Ըստ ՄՄ 7816 ձեռագրի վերջում տեղ գտած ժամանակագրության՝ Մելիք-Թամրազը սպանվել է 1750 թ. «մայիս ամսունն»¹², որից հետո նոր միայն իշխանությունն անցել է Մելիք-Հովսեփին: Վերջինիս 1714 թվականից բաժանում է գրեթե չորս տասնամյակ:

Մելիք-Հովսեփը երկար է կառավարել Գյուլիստանը և իր մահկանացուն կնքել է 1770-ական թվականների վերջերին¹³: Հստակ է, որ 1780 թ. վերջերին Մելիք-Հովսեփն արդեն վախճանված էր, քանի որ մեզ է հասել Դուկաս Կարնեցի կաթողիկոսի՝ նույն թվականի դեկտեմբերի 23-ով թվագրված և հանգուցյալի ավագ որդի Մելիք-Բեգլարին ուղարկված մխիթարական թղթի համառոտագրությունը: Այդ գրությունից տեղեկանում ենք, որ Դուկաս կաթողիկոսը Մելիք-Բեգլարին «վասն մահուան հօրն ևս զմխիթարութիւնս գրեաց և պատուէր՝ արի լինիլ յամենայն գործս բարութեան՝ լինելով նախանձախնդիր հայրենի օրինաց և աւանդութեանց սրբոց, և ժառանգել զանուն բարեպաշտութեան»¹⁴: Այս խորապատկերում շատ ավելի հավանական է կարծել, որ 1714 թ. Մելիք-Հովսեփը տակավին ծնված չէր, քան այն, որ նա այդ թվականին կարող էր իր ստորագրությունը դնել որևէ փաստաթղթի տակ:

Այժմ քննենք այդ ժողովին Դիզակի Մելիք-Եգանի մասնակցության հնարավորության հարցը, որը «Գաղտնիք»-ում ներկայացված է որպես «Մելիք-Աւան Բ»: Նախ և առաջ հարկ է նշել, որ Մելիք-Եգանը եղել է առաջինը և միակը իր տոհմում¹⁵ ու իր անվանը կից երբեք չի կրել «Բ» (երկրորդ) թվահամարը: Անցողակի նկատենք նաև, որ Արցախի մելիքներն իրենց անունների համարակալում չեն գործածել, այլ դա հետագա շրջանի ուսումնասիրողների գործն է:

Մելիք-Եգանի՝ Տող գյուղում գտնվող ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրության միջոցով հնարավոր է պարզել նրա իշխանության գալու մոտավոր թվականը: Այդ վիմագրում մասնավորապես կարդում ենք. «Այսպես

¹² ՄՄ 7816, ք. 20բ, նաև՝ Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ., Բ. I, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 396:

¹³ Ա. Մաղալյան, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Երևան, 2007, էջ 88–89:

¹⁴ Գիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք I, Դուկաս Կարնեցի, Բ. Ա, աշխատասիրությամբ՝ Վ. Գրիգորյանի, Երևան, 1984, էջ 174:

¹⁵ Ա. Մաղալյան, նշվ. աշխ., ներդիր՝ Մելիք-Եգանյանների տոհմաձուրը:

է, որ ես Ղուկաս վարդապետի որդիս, որ իմ անունն է Մելիք-եգան, նախապես ժողովուրդը հավաքվեց և ինձ քյոխվա [տանուտեր] կարգեց: Դրանից հետո, երբ երկիրը խառնակություն մատնվեց, շահ Սուլթան-Հուսեյնի որդի շահ Թահմասպ թագավորին որոշ ծառայություն մատուցեցի, և նա բերեց սրանց [վրա] ինձ մելիքություն տվեց...»¹⁶: Այս տողերից պարզվում է, որ նախքան Դիզակ գավառի մելիք դառնալը եգանը եղել է Տող գյուղի տանուտերը:

Հայաստանի ազգային արխիվում պահվում է ՌՃԿԶ (1717) թվականը կրող մի առուծախի պայմանագիր, ըստ որի՝ Ջիլավանց Տիհու տղա Չալին իր ջրաղացը վաճառում է իր հորեղբայր «Սարքիսայ տղա Իսուն»¹⁷: Այդ պայմանագրի վրա դրված է եգանի կնիքը՝ «եկան քոխան վկ.» մակագրությամբ: Այսպիսով, այս փաստաթղթի շնորհիվ պարզ է դառնում, որ 1717 թ. եգանը տակավին Տող գյուղի տանուտերն էր:

Մելիք-եգանի ընդունարանի մուտքի վերոհիշյալ արձանագրությունից երևում է, որ նրա մելիքական իրավունքները հաստատվել են Սեֆյան շահ Թահմասպ II-ի կողմից: Ըստ նշանավոր պատմաբան Հ. Փափազյանի՝ դա կարող էր տեղի ունենալ 1724–1725 թթ., երբ վերջինս աֆղաններից հալածված անցել էր Ատրպատական¹⁸: Իսկ ինչպես տեղեկանում ենք ՄՄ 1915 ձեռագրի վերջում Մեսրոպ վարդապետի թողած հիշատակարանից, նաև նախքան այդ «ՌՃՀԲ (1723) թուին հոկտե[մ]բերի Ի և Թ (29)-ին թագաւորն Շահ Թահմազ եմուտ ի քաղաքն Նախչաւան»¹⁹: Սեֆյան շահը փորձում էր միավորել ուժերը՝ դիմագրավելու օսմանյան բանակի ներխուժմանն Անդրկովկաս և Ատրպատական: Ակներևաբար, այդ ժամանակ էլ հաստատվել են եգանի մելիքական իրավունքները:

Հայ-ռուսական հարաբերություններն արտացոլող փաստաթղթերը հնարավորություն են ընձեռում առավել որոշակիացնել եգանի՝ մելիք նշանակվելու տարեթիվը: Այդ վավերագրերում եգանն առաջին անգամ մելիքի տիտղոսով հիշատակվում է 1724 թ. մարտի 20-ով թվագրված մի փաստաթղթում²⁰, ուստի, ամենայն հավանականությամբ, նրա մելիքական իրա-

¹⁶ Հ. Փափազյան, «Մելիք եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը», ԼՀԳ, 1985, N 5, էջ 77:

¹⁷ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 57, ց. 1, գ. 3, ք. 4:

¹⁸ Հ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 77:

¹⁹ ՄՄ 1915, ք. 280բ:

²⁰ Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 92.

վունքները շահ Թահմասպ II-ի կողմից հաստատվել են 1723-ին կամ 1724 թ. սկզբին²¹: Այսպիսով, թեև 1714 թվականից եգանի մելիք դառնալուն բաժանում է ընդամենը մեկ տասնամյակ, սակայն այդքանն էլ բավարար է այդ ժողովին նրա մասնակցությունը ևս հերքելու համար:

Ինչ վերաբերում է «Գաղտնիք»-ում հիշվող Ջրաբերդի Մելիք-Եսայի Մելիք-Հայկազյանցին, ապա թեև XVIII դ. առաջին քառորդին եղել է նման մելիք, սակայն նրա դեպքում էլ հարկ է նկատել, որ Ջրաբերդում իշխող Մելիք-Իսրայելյանները երբեք իրենք իրենց չեն անվանել այդ ազգանունով, այլ դա XIX դ. վերջին կատարված վերագրում է:

«Գաղտնիք»-ում նշված հինգ անձանցից միայն Խաչենի Մելիք-Գրիգոր Հասան-Ջալալյանն է, որի վերաբերյալ այս երկի տեղեկությունները ժամանակագրական անհամապատասխանություններ կամ փաստական սխալներ չեն պարունակում:

Այսպիսով, Քանձասարի 1714 թ. «գաղտնի ժողովի» արձանագրությունները իբր թե «ստորագրած» հինգ մելիքներից երեքը չեն իշխել այդ ժամանակ, հետևաբար այդ թվականին չէին կարող ստորագրել որևէ փաստաթղթի տակ, իսկ մյուս երկուսի դեպքում էլ համընկնումները կրում են զուտ պատահական բնույթ:

Սակայն, ո՛չ ոք և ոչինչ ավելի լավ չեն կարող հերքել այդ արձանագրությունների վավերականությունը, քան դրանց բովանդակությունը: Ծանոթանալով արձանագրությունների բովանդակությանը՝ դժվար չէ նկատել, որ դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երեք կանոնախմբի, որոնք, համապատասխանաբար, վերաբերում են հոգևոր իշխանության ոլորտին, մելիքների իրավունքներին ու պարտականություններին և նրանց ամուսնաընտանեկան հարաբերություններին:

Արձանագրությունների առաջին տասը կետերը վերաբերում էին հոգևոր-եկեղեցական կյանքի կազմակերպմանը Արցախում: Դրանց մեջ առաջին իսկ հայացքից իր անհավանականությամբ աչքի է զարնում Գ կետը, որն ասում է. «Եթէ Ջալալեան տոհմի եպիսկոպոսներից և ազգից չգտնուի արժանաւորագոյն կաթողիկոսացու, դրսից ընտրելու է»: Մի՞թե փառքի գագաթնակետին գտնվող Քանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի նախագահու-

²¹ Ա. Մաղալյան, նշվ. աշխ., էջ 204:

Թյամբ գումարված «գաղտնի ժողովում» հնարավոր էր նրա տոհմական շահերին կոպտորեն հակասող նման որոշման ընդունումը:

Հավելենք նաև, որ այս կետը հակասում է արձանագրությունների հաջորդ՝ Դ կետին, որը պատվիրում է «որդիաբար հնազանդիլ Աղուանից կաթողիկոսին»: Այդ ժողովին մասնակցող «հնազանդ որդիներից» ո՛ւմ և ինչի՞ն էր պետք նման արտառուց կետի մուծումը արձանագրությունների մեջ: Նման բան անհնար է պատկերացնել այն փոթորկոտ օրերին:

Ինչ վերաբերում է արձանագրությունների Զ-Ժ կետերին, որոնք ասում են՝ «Ամեն վիճակաւոր եպիսկոպոս իրաւունք ունի ձեռնամուխ լինիլ միայն իւր վիճակի կարգադրութեան և ո՛չ այլոց թէ՛ ձեռնադրութեամբ և թէ՛ որևիցէ գործերով» (Զ), «Եթէ ամեն գաւառում հարկաւորուին վարդապետ, քահանայ, սարկաւազ և դպիր՝ վիճակաւոր եպիսկոպոսներն նախ պարտաւոր են գրով կանխաւ զեկուցանել Աղուանից կաթողիկոսին և ապա ձեռնադրել նորա հրամանաւ» (է), «Ամեն եպիսկոպոս պէտք է հոգալ իւր վիճակի և իւր վանքի լուսաւորութեան և որչափ կարելի է ձեռնադրել ուսեալները և ո՛չ թէ տգէտները» (Ը), «Վանահայրերի ընտրութիւնն կախուած է միաբանութիւններից և Աղուանից կաթողիկոսին հաստատութիւնից» (Թ), «Յանցաւոր եպիսկոպոսների պատիժներն կախուած են կաթողիկոսից. իսկ միաբան վարդապետաց, սարկաւագաց և դպրացն՝ վանահայր եպիսկոպոսներից, և քահանաներինն՝ վիճակաւոր եպիսկոպոսից, բայց այս ամենն զգուշաւոր քննութիւններից վերջն» (Փ), ապա դրանք դարերով ամրագրված հայտնի ճշմարտություններ են, որոնց ընդունման համար ամենևին էլ կարիք չկար «գաղտնի ժողով» գումարելու: Խնկաբույր այս տողերից երևում է, որ դրանց հեղինակը իր կյանքում բնավ գործ չի ունեցել վառողի հետ:

Այս ամենը նկատի ունենալով, տակավին երիտասարդ Լեոն իրավացիորեն գրում է. «Առաջին հատորի վերջին գլուխը նուիրուած է Աղուանից (Գանձասարի – Ա. Մ.) կաթողիկոսութեան խնդրին, և այդ գլուխը մի պատմական կարևոր փաստ չի պարունակում, այլ միայն մի կանոնագիր, որ որոշում է հասարակ ժողովրդի և կաթողիկոսի իրաւունքները և յարաբերութիւնները, կանոններ, որոնք յայտնի են իւրաքանչիւր քրիստոնէի»²²:

Արձանագրությունների հաջորդ կետերը հիմնականում վերաբերում են Արցախի մելիքների իրավունքներին ու պարտականություններին: Դրանց մեջ

²² ԱՅ, նշվ. աշխ., էջ 73:

խնդրահարույց է հատկապես ժԱ կետը, որն ասում է. «Իւրաքանչիւր մեւիք պարտաւոր է գահերէջ ճանաչել Ջալալեան մեւիքները և թէ՛ յայտնի և թէ՛ գաղտնի ժողովատեղի ընդունիլ Գանձասարի վանքը: Ամեն զօրավար հնազանդելու է իւր մեւիքի հրամանին, ամեն գնդապետ իւր զօրավարին և ամեն զօրական իւր գնդապետին ևն»: Այս կետում որքան նախադասություններ, այնքան էլ սխալներ կան:

Նախ և առաջ պետք է փաստել, որ Արցախի մեւիքություններում Հասան-Ջալալյանները ամենևին էլ չեն եղել գահերեցներ: Ընդհակառակը, «դարերի ընթացքում այնքան բազմացել և ճյուղավորվել էին նրանք, — իրավացիորեն գրում է Բաֆֆին, — որ հաշենի փոքրիկ գավառը ամենամանր կտորներով բաժանված էր այդ տոհմի ներկայացուցիչների ձեռքում, որոնք բնականաբար շատ հաշտ չէին կարող լինել միմյանց հետ: Այդ էր պատճառը նրանց վերջին ժամանակների թուլության, որ չէին կազմում մի գորեղ, միացյալ իշխանություն»²³: Արցախի մեւիքությունների պատմությանը քիչ թե շատ ծանոթ յուրաքանչյուր ոք գիտի, որ այնտեղ գահերեց է եղել Դիզակ գավառի նշանավոր տիրակալ Մեւիք-Եգանը:

Անտրամաբանական է նաև նույն նախադասության շարունակությունը, որը որպես մեւիքների «գաղտնի» ժողովների վայր է ընդունում Գանձասարի վանքը: Հարց է ծագում, ի՞նչ կարիք կար հատուկ արձանագրութեամբ գաղտնազերծելու նման վտանգավոր գաղտնիքը: Մի՞թե Արցախի մեւիքները չէին կարող իրենց գաղտնի ժողովների վայրի վերաբերյալ նախապես բանավոր պայմանավորվել:

Եվ, վերջապես, Արցախի մեւիքություններում բնավ չեն եղել գնդապետներ: Արցախի մեւիքական զորքի հրամանատարները կոչվել են յուզբաշիներ (հարյուրապետներ): Անգամ XVIII դարի 20-ական թթ. ազատագրական հուժկու շարժման ժամանակ հայոց սղնախների զինվորական ուժերի հրամանատար Ավանը յուզբաշի էր և իր գրություններում իրեն հենց այդպես էլ կոչում է. «Ես՝ ուզբաշի Ավանըս...»²⁴:

Նմանատիպ սխալ կա նաև ԺԴ կետում, որտեղ կարդում ենք. «Իւրաքանչիւր մեւիք, եթէ կը յանդգնի իւր գաւառի որոշեալ սահմաններից դուրս գալ և ուրիշ մեւիքների իրաւունքը բռնի յափշտակել՝ կը պատժուի միւսների (մեւիքնե-

²³ Բաֆֆի, համասյի մեւիքությունները, էջ 426:

²⁴ Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 57.

րի) ժողովով որոշած պատժով և ժՖ. (10000) թուման տուգանք կը տուժէ մելիքաց (ընդհանուր) գանձարանին և կտուժէ առանձին՝ վնասուած մելիքի վնասը»։ Բանն այն է, որ Արցախի մելիքները չեն ունեցել ընդհանուր գանձարան։

Անճշտություն է պարունակում նաև արձանագրությունների ժէ կետը, որն ասում է. «Հայրենեաց և կրօնի դէմ դաւաճանութիւն և ծանր յանցանք գործողն, թէ՛ մելիք լինի, թէ՛ զինուորական և թէ՛ ժողովրդական, կը պատժուի կրօնական և մելիքական խառն ժողովոյ որոշած պատժով»։ Մինչդեռ Արցախի մելիքություններում դատական իշխանության գործառույթները իրականացրել է ո՛չ թե կրօնական և մելիքական խառը ժողովը, այլ «դատավարության իրավունքը պատկանում էր մելիքին և նրա հաստատած տանուտերին։ Ծանր հանցանքները ինքը՝ մելիքն էր քննում, իսկ թեթև ները՝ տանուտերերը։ Այս վերջիններիս վճիռներից դժգոհը կարող էր բողոքել մելիքին, որի վճիռը վերջնական էր»²⁵։

Սույն արձանագրությունների իրական հեղինակը չափազանց ազոտ պատկերացում է ունեցել Արցախի մելիքների իրավունքների ու պարտականությունների մասին։ Այդ է պատճառը, որ նրա մոտ որոշ կանոններ կրում են ընդհանուր, հրապարակախոսական բնույթ, ինչպես, օրինակ. «Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է արթուն հսկել իւր սահմաններին, և եթէ վտանգ կը նշմարէ թշնամեաց կողմից, անմիջապէս պէտք է հաղորդէ միւսներին» (ժԳ), «Ամեն ոք (մելիք) պարտաւոր է ամրապնդած պահպանել ներքին սիրոյ և միաբանութեան կապը, միաձոյլ զօրութեամբ արտաքնոց դէմ կռուելու» (ժԵ), «Մեծ կամ փոքր պատերազմներն կը մղուին բոլոր մելիքների, զօրավարների և գնդապետների որոշելուց յետոյ։ Անակնկալ կամ յանկարծակի դէպքերն բացառութիւն կը լինին» (ժԶ), «Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է Հայրենեաց ընդհանուր շահերը իւր գաւառի շահերից վեր դասել և իւր գաւառի շահերը իւր անձնական շահերից և օգուտներից» (Ի) և «Ամեն մելիք պարտաւոր է գտնուիլ իւր զօրաց գլխին պատերազմի ժամանակ և խրախուսել քաջասրտութեամբ իւր զօրքը և զօրավարը։ Բացառութիւն է հիւանդութեան բանաւոր պատճառն» (ԻԲ)։

Մինչդեռ, առանց հատուկ որոշումների էլ պարզ է, որ յուրաքանչյուր մելիք պարտավոր էր պաշտպանել իր մելիքության սահմանները, ամրապնդած պահել ներքին միաբանությունը, Հայրենիքի շահերը վեր դասել ամեն ինչից,

²⁵ Ե. Լալայան, *Երկեր*, հ. 2, Երևան, 1988, էջ 245, Ա. Մաղալյան, *նշվ. աշխ.*, էջ 54:

իսկ պատերազմի ժամանակ, անգամ հիվանդության դեպքում, առաջնորդել իր գործը: Դրանից էր կախված ինչպես իր, այնպես էլ իր մելիքության ապագան, և այս ամենն իրականացնելու համար ո՛չ մի մելիք կամ իշխան բնավ կարիք չունեն հատուկ հիշեցումների: Ինչպես տեսնում ենք, սույն արձանագրությունների իրական հեղինակի գրչի տակ հայտնի իրողությունները վերածվել են «գաղտնի ժողովի» որոշումների:

Արձանագրությունների ժԸ և ԻԱ կետերը, ինչպես տեսանք, նվիրված են մելիքների ամուսնաընտանեկան հարաբերությունների կարգավորմանը: Այդ կանոններից 18-րդը ասում է. «Ո՛չ այլազգի իշխանաւորաց հետ խնամութիւն հաստատել և ո՛չ երկպառակութեամբ նոցա յարիլ»: Այս կետի ետևում պարզապես անհնար է չնկատել Վարանդայի տխրահռչակ Մելիք-Շահնազարի ստվերը:

Արցախի մելիքներից հենց նա էր, որ «իր գործերը բարեկավելու և դիրքերն ամրապնդելու համար, աղջկան՝ Հուրգազ խանումին, կնության է տալիս Իբրահիմ խանին, և այդ կերպ նրա հետ բարեկամական կապեր հաստատում»²⁶: Կասկած չկա՛, որ արձանագրությունների իրական հեղինակը հենց նրան է նկատի ունեցել իր ստեղծած կանոնախմբում այս կետը մտցնելու համար:

Մեր ենթադրության ճշմարտացիությունը ապացուցվում է արձանագրությունների ԻԱ կետով, որն ասում է. «Մելիքներից ով ոք կը յանդգնի, իւր օրինաւոր ամուսնոյն վերայ, ուրիշ ապօրինի կին պահել, հասարակութեան տալ վատ օրինակ և գայթակղութիւն և թշնամանել եկեղեցւոյ օրէնքը՝ այնպիսին անխնայ կը պատժուի արդար վրէժխնդրութեամբ»: Իսկ Արցախի մելիքներից այս «պայմաններին» առաջին հերթին բավարարում է Մելիք-Շահնազարը: Այդ մասին տեղեկանում ենք մելիքների կանանց և որդիների մասին Բաղդասար մեսրոպուլիս Հասան-Ջալալյանի՝ 1849 թ. մի գրությունից, որտեղ նրա ընտանիքի մասին ասվում է հետևյալը. «Վարանդու Մէլիք-Շահնազարն ունէր ինքեան զառաջին օրինաւոր կին Քաջում անուն, յորմէ և ծնեալ է օրինաւոր որդի նորա Մէլիք-Ջիւմշիւզն: Ջկնի մահուան յիշեալ Քաջումին, Մէլիք-Շահնազարն էառ առ ինքն ի կենդանի առնէ զկինն Սօնայ և ընդդէմ օրինաց պսակեցաւ ընդ նմա, յորմէ և ծնեալ է որդի նորա Մէլիք-Հիւսէինն, որոյ և ժառանգքն գտանին այժմ յԱւետարանոց գեղջ: Ի կենդանութեան նոյն Սօնայ ապօրինաւոր կնոջն Մէլիք-Շահնազարն կրիւք բղջախոհութեան (ցանկասիրությամբ – Ա. Մ.)

²⁶ Միգրա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Երևան, 2000, էջ 42:

ամուսնացաւ ընդ օրիորդին Մալակայ, դստեր հարազատ եղբոր հանգուցեալ կնոջն իւրոյ Թաշումի, և յայսմ ապօրէն ամուսնութենէ ծնեալ են Ջահանբախշն և Ջահանկիրն, որոց ժառանգք ևս գտանին յԱւետարանոց»²⁷:

Այն, որ սույն կանոնի հիմքում ընկած է հե՛նց Մելիք-Շահնազարի այդօրինակ վարմունքը, ապացուցվում է նաև «Գաղտնիք»-ի հետագա շարադրանքով, որտեղ արձանագրություններից ընդամենը մեկ թերթ այնկողմ կարդում ենք. «Մելիք-Շահնազար Գ. յաճախակի մուտ գործելով Փանահ և Իբրահիմ ճըռ-խաների մօտ՝ տեսաւ նոցա կանանոցում բազմաթիւ կիներ, հարձեր և աղախիններ: Ինքն ևս, վատ օրինակ առնելով՝ սկսաւ հետևիլ բազմակնութեան, առ ոտն կոխելով քրիստոնէութեան «միակնութեան» պատուէրը, և անլուր լինելով Յովհաննէս (Աղուանից) ժ կաթողիկոսի խրատներին և եպիսկոպոսաց քարոզներին»²⁸: Պարզ է ուրեմն, որ սույն արձանագրությունները ստեղծվել են դրանց վերագրման թվականից շատ ավելի ուշ:

Այս արձանագրությունների հորինման պատճառները հասկանալու համար շափազանց կարևոր նշանակություն ունի դրանց վերջին՝ ԻԳ կետը, որն ասում է. «Մեզանից ով ոք կը յանդգնի սոյն կանոններին հակառակը գործել, Հայրենեաց և կրօնի թշնամու կողմն անցնիլ, նորա հետ միաբանելով Հայրենեաց հանգատութիւնը վրդովել, հայր հայի դէմ թշնամի յարուցանել և արիւնհեղութիւն պատճառել՝ այնպիսին մահուան պատժով կը պատժուի, միւս մեկիքներն կը գրաւեն նորա բերդը և ինչքը ցնոր տնօրէնութիւն»:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ սույն արձանագրությունների իրական հեղինակը Արցախի մելիքությունների ողբերգությունից դասեր քաղած և համապատասխան հետևություններ արած հայրենասեր հոգևորական է, որը հետին թվով ստեղծել է այս կանոնները ու «տվել» մելիքների ձեռքը:

«Գաղտնիք»-ի մեջ գետեղված բոլոր թղթակցությունները կեղծ են, – միանգամայն իրավացիորեն գրում է Րաֆֆին, – «Գաղտնիք»-ի բազմաթիվ թղթակցությունների մեջ միայն երկու նամակ կա, որ իսկական են: Դրանցից մեկը Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարյանի նամակն է, որ գրված է 1806 թ. դեկտեմբերի 2-ին Շուշի քաղաքում (եր. 286–291), իսկ մյուսը՝ Գյուլիստանի

²⁷ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 150, վավ. 839, թ. 3–4, բնագիր, կամ՝ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813–1933 թթ.), կազմեց՝ Ս. Բէհրուդեանը, Երևան, 2001, էջ 180:

²⁸ Ա. Բէկնազարեանց, նշվ. աշխ., էջ 217:

Մելիք-Աբովի նամակն է, որ գրված է 1807 թ. նոյեմբերի 23-ին Թիֆլիսում (եր. 292–296): Թե առաջին և թե երկրորդ նամակը ուղղված են Աղա-Մինաս Լազարյանի հասցեին Ս. Պետերբուրգ»²⁹:

Ամփոփելով՝ նշենք, որ սույն քննությունը մեզ բերեց հետևյալ եզրակացությունների.

1. Ջբաջառելով հանդերձ, որ Փանձասարում XVIII դարի սկզբին գումարվել են գաղտնի ժողովներ, այնուհանդերձ պետք է փաստենք, որ մասնակիցների նման կազմով ժողով այնտեղ 1714 թ. տեղի ունենալ չէր կարող:

2. Փանձասարի 1714 թ. «գաղտնի ժողովի» արձանագրությունները գրական կեղծիք են և ոչ մի կապ չունեն XVIII դարի սկզբի եղելությունների հետ: Այս արձանագրությունները ո՛չ թե կանխորոշում են իրադարձությունները, այլ արձագանքում են վաղուց տեղի ունեցած եղելություններին:

3. Այդ արձանագրությունների հեղինակը ո՛չ թե գինավառ մելիք է, այլ բարոյախոս հոգևորական: Այստեղից էլ պարզ է դառնում, որ դրանց իրական հեղինակը ոչ այլ ոք է, եթե ոչ «Գաղտնիք»-ի հեղինակ Մակար եպս. Բարխուտարյանցը:

Ո՛չ անսահման «հայրենասիրությունը», ո՛չ էլ մեծ ցանկությունը չեն կարող վավերականություն հաղորդել անվավեր փաստաթղթին, եթե ստորագրման պահին այն «ստորագրողները» տեղում չեն գտնվել:

ARTAK MAGHALYAN

THE AUTHENTICITY OF THE PROTOCOLS OF THE “SECRET COUNCIL” OF GANDZASAR IN 1714

Keywords: Apres Beknazaryants, Makar Barkhudaryants, Raffi, “The Secret of Karabakh”, The Meliqdoms of Artsakh, Gandzasar, literary forgery, fake document.

In 1886, in Saint-Petersburg, a book called The Secret of Karabakh was published under the authorship of Apres Beknazaryants. However, the actual author of the book was Bishop Makar Barkhudaryants. Soon after its publication, the book

²⁹ Բաֆֆի, Գաղտնիք Ղարաբաղի, էջ 114-115:

became a target of harsh criticism, by Raffi and Leo, for obvious factual errors and inventions. The two historians proved that The Secret of Karabakh was nothing but a fabrication.

130 years have passed after the publication of The Secret of Karabakh, but certain excogitations of this book continue tempting some researchers. This particularly regards the protocols of the so-called “Secret Council” of Gandzasar in 1714, which reached us only through the above-mentioned book. The present study discusses those protocols.

Our analysis has revealed that three of the five meliqs, who allegedly signed the protocols, were not ruling at the time of the Council and, therefore, could not have signed any documents that year. As for the two other meliqs, the coincidences are accidental. The content of the protocols is the best proof of fabrication. The actual author had rather a vague idea of the rights and duties of the Armenian meliqs of Artsakh (Karabakh). Obviously, the protocols were created much later than the alleged time of their composition; they are not first-hand records of an agreement but reflect bygone events. In the meantime, our study does not question the very fact of meliq councils but just proves that those particular protocols are a later forgery.

The actual author is a patriot priest who learned lessons from history and, drawing conclusions from the tragedy of the meliqdoms of Artsakh, retrospectively invented the Gandzasar canons. It becomes clear that the same person, Bishop Makar Barkhudaryants, wrote both the protocols and the book entitled The Secret of Karabakh.

АРТАК МАГАЛЯН

**К ВОПРОСУ О ДОСТОВЕРНОСТИ ПРОТОКОЛОВ
ГАНДЗАСАРСКОГО “ТАЙНОГО СОБРАНИЯ” 1714 Г.**

Ключевые слова: Апрес Бекназарянц, Макар Бархударянц, Раффи, “Тайна Карабаха”, меликства Арцаха, Гандзасар, литературная фальсификация, недействительный документ.

В 1886 г. в Санкт-Петербурге за авторством Апреса Бекназарянца вышел в свет труд под названием “Тайна Карабаха”, автором которого в дей-

ствительности был епископ Макар Бархударянц. Вскоре с резкой критикой грубых фактических ошибок и вымыслов, отраженных в этой книге, выступили Раффи и Лео, которые со всей убедительностью доказали, что “Тайна Карабаха” не что иное, как литературная фальсификация.

Прошло 130 лет со дня издания “Тайны Карабаха”, однако ряд вымыслов, нашедших место в этой книге, продолжает искушать некоторых исследователей. Сказанное в первую очередь относится к протоколам так называемого Гандзасарского “тайного собрания” 1714 г., дошедшим до нас лишь посредством вышеупомянутой книги, изучению достоверности которых и посвящено данная статья.

Исследование показало, что из пяти меликов, якобы подписавших данные протоколы, трое не правили в указанное время и, следовательно, не могли подписать документы в указанном году; а в случае двух других меликов, совпадения носят случайный характер.

Однако ничто не может более убедительно доказать недостоверность этих протоколов, чем их содержание. Анализ содержания протоколов указывает на то, что их действительный автор имел весьма смутные представления о правах и обязанностях армянских меликов Арцаха. Таким образом, становится очевидным, что эти протоколы были созданы значительно позже, приписываемого им времени, и не свидетельствуют о реальных договоренностях, но лишь отражают давно имевшие место события. Вместе с тем, исследование не опровергает сам факт меликских собраний, а лишь доказывает недействительность самих протоколов.

Действительным автором указанных протоколов является патриотически настроенный священник, усвоивший уроки истории и сделавший выводы из трагедии арцахских меликств и задним числом создавший Гандзасарские каноны. Становится очевидным, что действительным автором протоколов Гандзасарского “тайного собрания” 1714 г. является никто иной, как автор “Тайны Карабаха” – епископ Макар Бархударянц.